# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/89 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան**

**3 հոկտեմբերի 2025թ.**

2025թ. հոկտեմբերի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ սարքավորումների ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/89 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Ալթունյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ԳՄ և Ա ԳՀԻ Դաշտավարության և անասնապահության մեքենայացման բաժնի վարիչ, LISS24 ծրագրի համակարգող, |
| Ձ. Պողոսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Միջազգային կապերի դեպարտամենտի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ալթունյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի երկու անդամները, բացակայում էր «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Միջազգային կապերի դեպարտամենտի պետ՝ Գ. Համբարձումյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում «iMotions A/S»-ի կողմից սահմանված

ժամկետում՝ 25.09.2025թ. ներառյալ գրավոր չի ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումները և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

1. «iMotions A/S»-ի կողմից ներկայացված հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «iMotions A/S» | անբավարար |

Հանձնաժողովը որոշեց.

1. «iMotions A/S»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

2. Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «iMotions A/S»-ի հայտերը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորին:

3. Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 2, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Ալթունյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ջ. Պողոսյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Սարգսյան ____________